

ՅԻԹԱՏԵԿԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆԵԼ ՏՈՒՈՂԻ  
ԳՐՔՈՅՍ, ԿՈԶԵՑԵԼՈՅ ԱՆՏԱՌ ԱՅԼԱՐԱՆՈՒ-  
ԹԵՆ (1740):

Չեռփէր Աշք. Մարենարանի թի- 1:

“Սքանչելահրաչ, ամենայաղթ, բնտիր եւ  
հեղաբարոյ ծառայն Աստուծոյ՝ Մովսէս, զինելու-  
թիւն համատարած աշխարհի ճառելով՝ զբազմա-  
կուտակումն տարրական ջրոց, ի բերանոյ բարձրելոյն  
կոչեաց՝ ծովս. եւ զամենագումարս սրբազանից  
կանունական գրեանց՝ Հոգին Սուրբ մակագրեաց՝  
Աստուծոցն. զի ի Հոգւոյն Սրբոյ կրեալք  
խօսեցան Մարգարէքն եւ Առաքեալքն եւ Սո-  
ղոմոն. զոր եւ ի նիկիական դաւանութեան՝ հե-  
ղինակ խօսողութեան Մարգարէից եւ Առաքելոց  
եւ Օրինաց, զՀոգին Սուրբ դաւանեցին Սուրբ  
Հարքն, ասելով. որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մար-  
գարէս եւ յԱւետարանս: Որով կամեցան յան-  
սխալութենէ խօսողին՝ զանսխալութիւն խօսեցելոցն  
արտայայտել: Այլ քանզի որպէս արհեստն ցանկայ  
հաւասարիլ բնութեան եւ ոչ կարէ, այսպէս եւ  
բնութիւնն՝ հեղինակին բնութեան եւ ոչ զօրէ  
համանմանիլ: Ասան որոյ եւ երջանկասէրն եւ  
բարեփառն ի մէջ թագաւորաց ճոխիմաստն  
Սողոմոն՝ կամելով զնմանութիւն նախատպին  
ամենայնի յինքեան բերել եւ իբր արհեստական  
արարչի իմիք բնութեամբ՝ զարարչին գործել  
զփանաքի նմանակերտութիւնս, ի գրգռջ ժո-  
ղովոց, 2. 6. ասէր. Արարի ինձ աւազանս ջրոց